ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՓԵՏՐՎԱՐ 2026



ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԵՏ

ԴԱՍԸՆԹԱՑ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ. ԱԽԹԱԼԱՅԻ ՀԱՆՔԱՓՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԿՀԱՆԳԵՑՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՂԵՏԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ»,«ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՆԵՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ողջույնի խոսք
- Հանդիպում Մարդու իրավունքների պաշտպանի հետ
- Ըստ էության. Ախթալայի հանքափորների գործադուլը կհանգեցնի սոցիալական աղետի
- «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրություն» թեմայով դասընթաց
- Աշխատանքային խնդիրներ և իրավունքներ I Ստուգված է
- Դասընթաց դասընթացավարների համար
- «Արհմիութենական փաստաթղթաշրջանառություն» թեմայով սեմինար
- Սեմինար արհմիութենական կազմակերպությունների նախագահների համար



ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:

Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԵՏ

Փետրվարի 9-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը և նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը հանդիպեցին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի հետ:

Քննարկման առանցքային թեմաներն էին՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային իրավունքի ոլորտում առկա խնդիրները, այդ թվում՝ աշխատողների աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը: Անդրադարձ կատարվեց գործադուլի իրավունքի իրացման հետ կապված խնդիրներին, այս ոլորտում լուրջ օրենսդրական ու ինստիտուցիոնալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը:

Քննարկվեցին նվազագույն աշխատավարձի սահմանման, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների երաշխավորման, միավորման ազատության իրավունքի իրացման, աշխատանքային իրավունքների պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգերի բացակայության, ինչպես նաև ոլորտում արձանագրվող ընթացիկ գործընթացներին վերաբերելի հարցեր:

Էլեն Մանասերյանն անդրադարձավ աշխատանքայւն իրավահաևաբերությունների ոլորտում Ախթալայի Լեռնահարստացման կոմբինատում այս օրերին առկա իրավիճակին, հատկապես աշխատողների առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների բացակայությանը:

Կարևորվեցին նաև աշխատանքային վեճերով դատական վճիռների և որոշումների կատարման խնդիրներին:

Կողմերը հաստատեցին ոլորտում ինստիտուցիոնալ համագործակցության ամրապնդման կարևորությունը:

Սկզբնաղբյուր՝
https://hamk.am/handipum-mardu-iravunqneri-pashtpani-het

Ըստ էության. Ախթալայի հանքափորների գործադուլը կհանգեցնի սոցիալական աղետի

Oragir.News-ի «Ըստ էության» հաղորդաշարում հյուրընկալվել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

Զրույցի ընթացքում քննարկվել են Հանրապետական 4-րդ կոլեկտիվ պայմանագիրը, դրա մշակման ու ստորագրման գործընթացը, Ախթալայի հանքի աշխատողների գործադուլը, սոցիալական գործընկերության մեխանիզմներն ու Հայաստանում արժանապատիվ աշխատանքի մշակույթի ձևավորումը:

Էլեն Մանասերյանը ընդգծել է, որ եռակողմ պայմանագիրը միտված է պետություն–աշխատող–գործատու համագործակցության մշակույթի զարգացմանը՝ շեշտելով, որ աշխատողի բարեկեցությունն անմիջականորեն պայմանավորում է բիզնեսի զարգացումը: Նա նաև նշել է, որ Ախթալայի գործադուլը կարող է հանգեցնել սոցիալական լուրջ խնդիրների:

Սկզբանաղբյուր՝
https://www.youtube.com/watch?v=oTuZAV0DFfk

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ

Փետրվարի 18-ին կայացավ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրություն» թեմայով դասընթացը, որին մասնակցում էին ՀԱՄԿ-ի ճյուղային միություններին անդամակցող կազմակերպությունների արհմիության նախագահներ, աշխատողներ, կադրային մասնագետներ, հաշվապահներ՝ Երևան քաղաքից և մարզերից:
Դասընթացները կազմակերպվում են արհմիության անդամների համար և լինելու են շարունակական:

Սկզբնաղբյուր՝ https://hamk.am/hayastani-hanrapetutyan-ashkhatanqayin-orensdrutyun-temayov-dasyntats

«Ստուգված է»-ն անդրադառնում են երիտասարդների աշխատանքային խնդիրներին։

Սկզբնաղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=th_Shk6gN0E

ԴԱՍԸՆԹԱՑ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Սոլիդարիթի Սենթեր կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակում անցկացրեց «Դասընթաց դասընթացավարների համար» սեմինարը։

Փետրվարի **20-22**-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան կազմակերպեց «Դասընթաց դասընթացավարների համար» եռօրյա սեմինարի երկրորդ փուլը՝ նպատակ ունենալով զարգացնել արհմիութենական ակտիվի կարողությունները և ձևավորել որակյալ դասընթացավարների թիմ։
Սեմինարին մասնակցեցին տարբեր ճյուղային արհմիություններից ներկայացուցիչներ, որոնք մասնակցել էին դասընթացի առաջին փուլին։ Ծրագիրը կառուցված էր ինտերակտիվ մեթոդների վրա՝ ներառելով խմբային աշխատանքներ, գործնական վարժություններ, քննարկումներ և սիմուլյացիոն առաջադրանքներ։
Եռօրյա աշխատանքի արդյունքում մասնակիցները ոչ միայն ձեռք բերեցին նոր գիտելիքներ, այլև գործնականում փորձարկեցին դասընթացավարի դերը՝ մշակելով և ներկայացնելով իրենց մոդուլները։
Սեմինարը միտված էր ձևավորել կայուն և պրոֆեսիոնալ վերապատրաստողների, որոնք կնպաստեն արհմիութենական շարժման զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը։
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան շարունակելու է իրականացնել կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր՝ կարևորելով կրթությունը որպես կազմակերպական առաջընթացի հիմնասյուն։

https://hamk.am/dasyntats-dasyntatsavarneri-hamar-seminar
https://www.facebook.com/reel/1988130658472385

«ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ

Փետրվարի 25-ին կայացավ «Արհմիութենական փաստաթղթաշրջանառություն» թեմայով դասընթացը, որին մասնակցում էին ՀԱՄԿ-ի ճյուղային միություններին անդամակցող կազմակերպությունների արհմիության նախագահներ, ղեկավար մարմնի անդամներ՝ Երևան քաղաքից և մարզերից: Մասնակիցներին ներկայացվեց Արհմիության գործունեության օրենսդրական հիմքերը, անհրաժեշտ փաստաթղթաշրջանառությունը, արձանագրությունների, որոշումների բովանդակությունը և ձևը: Քննարկվեց նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված արհմիության լիազորությունները, իրավունքները, կոլեկտիվ բանակցությունները արդյունավետ իրականացնելու գործիքակազմերը:

Սեմինար արհմիութենական կազմակերպությունների նախագահների համար

Փետրվարի 28-ին և մարտի 1-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան Աղվերանում կազմակերպեց սեմինար՝ նվիրված արհմիութենական գործունեության կարևոր թեմաների՝ «Կոլեկտիվ բանակցություններ վարելու հմտություններ» և «Աշխատանքի պաշտպանության դերը և նշանակությունը» ուղղություններին:

Սեմինարին մասնակցում էին տարբեր ոլորտների արհմիութենական սկզբնական կազմակերպությունների նախագահներ, որոնց համար նման վերապատրաստումները կարևոր հնարավորություն են մասնագիտական գիտելիքներն ու առաջնորդական հմտությունները զարգացնելու համար:

Ծրագրի շրջանակում մասնակիցները ծանոթացան կոլեկտիվ բանակցությունների կազմակերպման և վարման արդյունավետ մեթոդներին, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության ոլորտում արհմիությունների դերին ու պատասխանատվությանը:

Սեմինարը անցկացվեց ինտերակտիվ ձևաչափով՝ ներառելով խմբային աշխատանքներ, քննարկումներ և գործնական առաջադրանքներ, որոնք հնարավորություն տվեցին մասնակիցներին ոչ միայն ստանալ նոր գիտելիքներ, այլև փոխանակել փորձ և քննարկել իրենց գործունեության ընթացքում առաջացող խնդիրները:

Վերապատրաստման արդյունքում մասնակիցները խորացրին իրենց գիտելիքները սոցիալական գործընկերության, արդյունավետ բանակցությունների և աշխատողների շահերի պաշտպանության ոլորտներում՝ կարևորելով արհմիությունների դերը աշխատավայրում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման գործում:

Սկզնաղբյուր՝
https://www.facebook.com/pagehamk/posts/pfbid0MHJMjRw7pKvW1cnnNUPPA5q6LhgZiMypRDCiUzN3ND9JxUdVH5Y9DWPR4d5B324Ml

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ

Հեռ. ՝ +37410 583682

www.hamk.am

hamk@hamk.am